Երաժշտության մանկավարժության ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը: |
| ***2022թ.-ի օգոստոսի 29-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է հաշվետու տարում ամբիոնի ծավալը, որը կազմել է 26481 ժամ, իսկ նախորդ՝2021-2022 ուս. տարում եղել է 27951 ժամ: Հստակ երևում է 1470 ժամաքանակի նվազում, որը պայմանավորված է ինչպես դիմորդների թվի նվազման, այնպես էլ տարբեր կուրսերում ուսանողների՝ուսուցման պրոցեսը դադարեցնելու հետ:***<br><br>***Դիմորդների թվի նվազումն ըստ մեզ պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պայմաններով:***<br><br>• ***Ուսուցչի մասնագիտության գրավիչ չլինելու հետ,***<br>• ***Շենքային ոչ բավարար պայմաններով,***<br>• ***Նյութական ապահովվածության անբավարարվածությամբ (հնամաշ գործիքներ, հնամաշ գույք, սառը օդային պայմաններ և այլն):***<br><br>***Ամբիոնը գտնում է, որ դիմորդների պրոֆեսիոնալ կողմնորոշման ուղղությանը նպաստելու համար հարկավոր է էլ ավելի ակտիվացնել այցելությունները դեպի համապատասխան ուսումնական հաստատություններ, ինչպես նաև դիմել բուհ-ի ղեկավարությանը՝մասնաշենքի պայմանների բարելավման և նյութատեխնիկական հագեցվածության ուղղությամբ աշխատանքներ տանելու խնդրանքով:*** |
| Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը: |
| **Ամբիոնում ստեղծված առարկայական նկարագրերում, թեմատիկ տրոհումներում մշտապես փորձ է արվում հեռավար միջոցներով ծանոթանալ այլ երկրների և այլ բուհերի ուսումնական գործընթացներին և ծագրերին և դրանք ներդնելով ուսումնական գործընթացում՝ բարձրացնել ուսուցման արդյունավետությունը և մոտիվացնել ուսանողներին, որպեսզի նրանք ևս ծանոթանան այլ բուհերում տեղի ունեցող գործընթացներին:** |
| Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները: |
| ***Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաներից մշակվել է գնահատման համակարգ, որի հիմքում դրված են այնպիսի մեթոդներ և չափանիշներ, որոնք հնարավորինս օբյեկտիվ են արտացոլում սովորողների գիտելիքները, կարողությունները, հմտությունները:***<br><br>**27.10.2022թ.-ի թիվ 2** ***ամբիոնի նիստում քննարկվել է այս հարցը և որոշվել է 2022-2023 ուսումնական տարում գնահատման համակարգի գործող տարբերակը թողնել նույնը, սակայն առաջիկայում, 2023-2024 ուսումնական տարվա համար նորից կվերանայվի հատկապես ընթացիկ ստուգումների և միջանկյալ ստուգումների գրավոր կամ բանավոր ձևով անցկացնելու հարցը:*** |

| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: |
|---|
| ***Ամբիոնի նիստերում կատարվել են ուսումնական գործընթացի հիմնական հարցերի և խնդիրների քննարկումներ, վերլուծություններ, խորհրդատվություններ՝ ուղղված ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:*** |

| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: | | |
|---|---|---|
| Արձ.N, ամսաթիվ | Քննարկման հարցերը | Ընդունված որոշումները |
| 19.04.22թ. N9 | 1. Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանություն:<br>2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը: | 1. Նիստի ընթացքում ներկայացվեց 2021-2022 ուս. տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանողներին և նրանց մագիստրոսական ատենախոսությունների թեմաների վերնագրերը: Ուսանողները ներկայացրին իրենց թեմաները, պատասխանեցին հարցերին: Արդյունքում որոշվեց 2021-2022 ուս. տարվա մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունները դրական կարծիքով ներկայացնել պաշտպանության:<br><br>2. Էլեկտրոնային հարթակում հիմնական աշխատանքները կատարվել են Classroom հարթակում տեղադրվող առարկայական նկարագրերում և թեմատիկ տրոհումներում որոշ կետերի վերանայման և փոփոխման ուղղությամբ:<br>1. Բոլոր առարկաներից վերանայվել են գրականության ցանկերը,<br>2. ներկայացվող ստեղծագործությունների ցանկերը,<br>3. անհատական առարկաներից կարևոր ուշադրություն է դարձվել ուսանողի անհատական ունակություններին և դրա զարգացմանը նպաստող համապատասխան ծրագրին,<br>4. յուրաքանչյուր ամսվա վերջում նաև ստուգվել են classroom հարթակում կատարվող աշխատաքները՝ համապատասխան ուսումնական նյութերի տեղադրումը, առարկայական նկարագրերի տեղադրումը,, էլեկտրոնային մատյանների կանոնավոր լրացումը:<br>• Արդյունքներ քննարկվել են ամբիոնի նիստերում և որակի հանձնաժողովներում, ոչ այնքան պատասխանատու դասախոսներին նախազգուշացվել է իրենց թերությունների և բացթողումների մասին, որոնք ,արտացոլվել են ամբիոնի ամսական հաշվետվությունների մեջ:: |
| 23.06.22թ. | 1. 2-րդ կիսամյակի բաց | 1. Նիստում քննարկվեց 2021-2022 ուս. տարվա 2-րդ |

| | | |
|---|---|---|
| N11 | դասերի և դասալսումների քննարկում: | կիսամյակի պլանավորված դասալսումների գրաֆիկը: Արդյունքում որոշվեց դասալսումներ իրականացնել ներքոնշյալ դասախոսների մոտ.<br>2. Մաղոյան Նաիրա - ՝Սոլֆեջիո և երաժշտության տեսություն՝ 1-ին կուրս:<br>3. Հակոբյան Արմինե - ՝Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն՝ 1-ին կուրս<br>4. Ալավերդյան Տիգրան - ՝Նվագարան՝ 3-րդ կուրս<br>5. Ադամյան Աննա - ՝Նվագարան՝ 4-րդ կուրս<br>6. Թաղնոսյան Շաքե - ՝Նվագարան՝ 1-ին կուրս<br>7. Ավետիսյան Մարիաննա- ՝Ձայնադրում՝ 4-րդ կուրս<br>8. Օջախյան Արմինե - ՝Ձայնադրում՝ 2-րդ կուրս<br>9. Սայադյան Զարուհի - ՝Ձայնադրում՝ 2-րդ կուրս<br>10. Կարապետյան Մերի-՝Ձայնադրում՝ 4-րդ կուրս<br>11. Պետրոսյան Սուսաննա- ՝Խմբավարություն և խմբերգային դասարան՝ 2-րդ կուրս<br>12. Մաթևոսյան Շուշանիկ- ՝Խմբավարություն և խմբերգային դասարան՝ 1-ին կուրս<br>13. Խաչիկյան Քրիստինե - ՝Խմբավարություն և խմբերգային դասարան՝ 3-րդ կուրս: |
| 29.08.22թ. N1 | 1. 2022-2023 ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում: | 1. 2021-2022 ուս. տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 27951 ժամ:<br>Այլ ամբիոններին փոխանցված ժամաքանակ – 1434 ժամ<br>Ժամավճար – 376 ժամ:<br>Թափուր է մնացել 3065 ժամ:<br>Արդյունքում գոյացած 23076 ժամը բաշխվել է ամբիոնի դասախոսների միջև: |
| 19.12.22թ. N5 | 1.Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Գայանե Հարությունյանի ատեստավորման հարցը:<br>2.Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Սերգեյ Խաչատրյանի ատեստավորման հարցը:<br>3. ԲՈՒՀ-ի 100-ամյակին նվիրված կայանալիք միջոցառմանը՝ երաժշտության մանկավարժության ամբիոնի մասնակցության հարցը: | 1. Նիստի ընթացքում նշվեց, որ Գայանե Հարությունյանը հաշվետու ժամանակահատվածում տպագրել է երկու հոդված, հանձնել է որակավորման բոլոր քննությունները և նրա թեկնածուական ատենախոսությունը՝ <<Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց>>, լիովին պատրաստ է պաշտպանության: Որոշվեց ատեստավորել հայցորդ Գայանե Հարությունյանին և նրա ատեստավորման հարցը դրական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:<br>2.Իսկ հայցորդ Սերգեյ Խաչատրյանը մինչ օրս չի ներկայացել ամբիոն և չի հանդիպել գիտական ղեկավարի հետ: Որոշվեց չատեստավորել հայցորդ Սերգեյ Խաչատրյանին և նրա ատեստավորման հարցը բացասական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ: |

| | | |
|---|---|---|
| | | 3. Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նիստի ընթացքում նշեց, որ 100-ամյակին նվիրված միջոցառումը կկայանա Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում, որին կմասնակցեն երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները և ուսանողները: |

| Պրոֆեսորադասախոսական կազմը | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դոկտոր | Դոկտոր, պրոֆեսոր | Պրոֆեսոր | Պրոֆեսոր, գիտ. թեկ. | Գիտ.թեկն. | Դոցենտ, գիտ. թեկ. | Դոցենտ | Ասիստենտ | Դասախոս | Դասախոս, գիտ. թեկ. | Ընդ-նը |
| Հաստիքային | – | 1 | 1 | 1 | – | 5 | 6 | 6 | 9 | 1 | 30 |
| Համատեղող | – | – | 1 | – | – | – | – | – | – | – | 1 |
| Ժամավճարային | – | – | – | – | – | – | 1 | – | – | – | 1 |
| Ընդա-մենը | – | 1 | 2 | 1 | – | 5 | 7 | 6 | 9 | 1 | 32 |

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում: |
|---|
| ***Ամբիոնի դասավանդվող առարկաների վերաբերյալ ստեղծվել է և շարունակվում է ստեղծվել ուսումնամեթոդական գրականություն ( Ա.Հարությունյան, Գ.Մելիքսեթյան, Մ.Բաղդասարյան, Ա.Աղամյան, Յու.Յուզբաշյան, Ն. Բաղալյան, Ա.Կոստանյան և այլք):*** |

| Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դասագրքեր | | | Ուսումնական ձեռնարկներ | | |
| ՀՊՄՀ դասիչով | ՀՀ ԿԳՆ դասիչով | Այլ դասիչներով | ՀՊՄՀ դասիչով | ՀՀ ԿԳՆ դասիչով | Այլ դասիչներով |
| – | 3 | 2 | – | – | 8 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| – | – | – | – | – | – |

| Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային | | Հանրապետական | | Քաղաքային | | Համալսարանական | | Ամբիոնային | |
| կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. |
| 4 | – | – | – | – | – | – | – | – | 5 |
| – | – | – | – | – | – | – | – | – | – |

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| Ամբիոնի հետազոտական գործունեությունը։ |
|---|
| *Ամբիոնի հիմնական հետազոտական ուղղություններն են մեթոդական, ուսումնական և արվեստագիտական ուղղությունները: Մեթոդական ուղղություններն են երաժշտատեսական և երաժշտապատմական առարկաների ուսումնասիրումը, իսկ կատարողական ուղղություններն են նվագարանը, վոկալը և խմբավարությունը:* |
| Ամբիոնի ՊԴԱ և ուսանողների գիտահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում։ |
| • *Ամբիոնի դասախոսները և ուսանողները հաշվետու տարում կատարել են գիտահետազոտական աշխատանքներ:*<br>1. *Ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դոկտոր Յուրի Յուզբաշյանը և ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը հաշվետու տարում մասնակցել են Ամբիոնի հայցորդ Նաիրա Յուրիի Վահանյանի ԺԳ.00.02 մասնագիտությամբ Մանկավարժական գիտությունների թեկնածուի հայցման համար ՝«Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների ինտոնավորումը ուսուցման գործընթացում» թեմայով ատենախոսության նախնական պաշտպանությանը, որպես Եռյակ խորհրդի անդամներ:*<br>• *Ամբիոնի դասախոսները և ուսանողները համատեղ մասնակցել են Երևանի պետական կոնսերվատորիայի ամենամյա գիտաժողովներին ՝մասնակցությամբ Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների.*<br>1. *Անի Վազրիկի Մանուչարյան-զեկույցի անվանումՙՙՀանրակրթական դպրոցում հոգևոր երաժշտության դասավանդման մեթոդ՚ մասնակցել է 20.05.2022թ.-ին, ղեկավար ՝ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյան:*<br>2. *Շուշաննա Մարզպետի Գրիգորյան- զեկույցի անվանումՙՙԵրգեցողությունը ՝երեխաների ռիթմական զգացողության զարգացման միջոց՚ մասնակցել է 30.11.2022թ.-ին, ղեկավար ՝ ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյան:*<br>3. *Լալա Մանուկի Սիմոնյան- զեկույցի անվանումՙՙՍոֆա Ազնաուրյանի ՝երեխաների համար Չիկարելիի արկածները՚օպերայի երաժշտադաստիարակչական նշանակությունը՚ մասնակցել է 30.11.2022թ.-ին, ղեկավար ՝ամբիոնի դոցենտ Մարգարիտա Բաղդասարյան:*<br>• *Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում արժանացել են մրցանակների և ստացել սերտիֆիկատներ.*<br>1. *Կոստանյան Արուսյակ Համազասպի* - ***II Международный конкурс научных, учебно-методических и творческо-педагогических проектов <<Музыкальное образование-*** |

*XXI>>. Номинация- <<Аранжировки, транскрипции, переложения>>. Сборник- <<Фортепианные переложения песен армянских композиторов>> (с методическими пояснениями)- Лауреат I степени.*
https://aspu.am/hy/content/hpmh_dasakhos_arusyak_kostanyany_arajin_kargi_mrcanakir/?fbclid=IwAR155vzeP0QGrAxh5CkHwORGmuc1-RpxzljlNCzX-OMLQhTRR5QHFH7YFxw#sthash.0ieXjPLN.z5PJX9Ok.dpbs

2. *Հարությունյան Աննա Պետրոսի- Լիտվայի Vytautas Magnus համալսարանում հանդես է եկել դասախոսություններով 24.04.22թ.-ից 30.04-22-թ.ը և ստացել մասնագիտական որակավորման բարձրացման սերտիֆիկատ:*
3. *Կարապետյան Մերի Համլետի- 2022թ.-ի հոկտեմբերի 27-28-ին Ռուսաստանում մասնակցել է ՛Սրտումդ ՛Ռուսաստան՛ միջազգային գիտաժողովին, հանդես է եկել <<Использование элементов армянской фольклорной музыки в джазовом и эстрадном жанре>> զեկույցով և ստացել է ՌԴ մշակույթի նախարարության ՛Պրոֆեսիոնալ որակավորման բարձրացման՛ հավաստագիր:*
https://aspu.am/hy/content/masnakcecin_srtumd_rusastan_mijazgayin_gitazhoghovin/?fbclid=IwAR1UbDD7L3LoWMe0F8faGNdEkqT1Od5bBzbwqzSlRUjT1VnrKph36u0sOws#sthash.OXmMm0m0.1NCyP4rz.dpbs

- *Ուսանողները մասնակցել են մրցույթների և օլիմպիադաների ՝ունենալով մեծ հաջողություններ.*

1. *Հովհաննիսյան Ռիտա- ներկայացրել է Հայաստանը 2022 թ.-ի հոկտեմբերի 27-28-ին Ռուսաստանում կայացած ՛Սրտումդ Ռուսաստան՛ միջազգային գիտաժողովի շրջանակներում և նույն ժամանակահատվածում կայացած համերգային ծրագրի գալա համերգի շրջանակներում Ռուսաստանի ֆիլհարմոնիայի բեմում կատարել է հայկական հարսանեկան երգ-պար ՛Թամզարա՛-ն:*

https://aspu.am/hy/content/masnakcecin_srtumd_rusastan_mijazgayin_gitazhoghovin/?fbclid=IwAR1UbDD7L3LoWMe0F8faGNdEkqT1Od5bBzbwqzSlRUjT1VnrKph36u0sOws#sthash.OXmMm0m0.1NCyP4rz.dpbs

2. *Մկրտչյան Սյուզաննա- 2022թ.-ի նոյեմբերի 22-ին Անահիտ Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոցում մասնակցել է ՛Մոցարտ՛ միջազգային մրցույթ-փառատոնին, ՛Դաշնամուր՛ անվանակարգում ստանալով 1-ին կարգի մրցանակ:*
3. *Թալալյան Շուշանիկ- մասնակցել է ՛Ազգային երգիչ՛ հանրապետական մրցույթին, անցել է նախնական լսումների փուլը, Թատրոնի 1-ին և 2-րդ փուլերը և կիսաեզրափակչի workshop փուլը:*

Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:

*Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում ծավալել են հետազոտական գործունեություն ՝ կազմակերպելով համերգ-սեմինարներ, որոնցում հստակ երևում է կապը ուսումնական գործընթացի հետ: Սրանց հիմքում ընկած է դասախոս-ուսանող ակտիվ փոխհամագործակցությունը, որն էլ հիմք է հանդիսանում հետագա ուսումնական գործընթացի բարելավման համար.*

1. *Հարությունյան Աննա- ՛Հոգու խոստովանություն՛ համերգ-սեմինար, որը կայացել է 2022թ.-ի ապրիլի 15-ին, ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում ՝ դասախոս-ուսանող համագործակցության միջոցով:* https://www.youtube.com/watch?v=ZBb3mijp7H8

2. *Աղամյան Աննա- Դասարանական համերգ-քննարկում (կատարողական խնդիրներ և բեմական հուզմունքի հաղթահարում), մասնակցել են տարբեր կուրսերում սովորող ուսանողներ: Տեղի է ունեցել 2022թ.-ի մայիսի 31-ին ՀՊՄՀ-ի 4-րդ մասնաշենքի դահլիճում:*
3. *Կոստանյան Արուսյակ - «Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներով» երաժշտական աշխատության համերգ-սեմինար, որը կայացել է դասախոս-ուսանող ակտիվ փոխհամագործակցության միջոցով: Տեղի է ունեցել 2022 թ.-ի*

*հոկտեմբերի 20-ին ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում:* [https://aspu.am/hy/content/hnchecin_sirvats_steghtsagortsutyunner/?fbclid=IwAR3tq5BuR-WQrD-rpB8RU3MHOn-HV5__6655e3aQzpk7L6Q0HC9_JoHz0ds#](https://aspu.am/hy/content/hnchecin_sirvats_steghtsagortsutyunner/?fbclid=IwAR3tq5BuR-WQrD-rpB8RU3MHOn-HV5__6655e3aQzpk7L6Q0HC9_JoHz0ds#)

4. ***Ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ համերգ-սեմինար՝ նվիրված բուհ-ի 100-ամյակին: Տեղի է ունեցել 2022թ.-ի ապրիլի 19-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում:*** [https://www.youtube.com/watch?v=kQqjKmeDPWc](https://www.youtube.com/watch?v=kQqjKmeDPWc)
5. ***Անահիտ Գասպարյանի դասարանական համերգ-սեմինարը, որը տեղի է ունեցել 2022թ.-ի դեկտեմբերի 19-ին ՀՊՄՀ-ի 4-րդ մասնաշենքի դահլիճում:***

| ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ | | | |
|---|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Մենագրության անվանումը | Հր.անուն և տարի | Ծավալ |
| Աղամյան Աննա, Բաբայան Արմինե | «Լուիզա Ջելթաղյան. խմբավարը և մանկավարժը»: | ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2022 | 76 էջ |

| Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ | | |
|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Հոդվածի , զեկույցի անվանումը | Ծավալ |
| Բաղդասարյան Մարգարիտա | **«Творческая палитра композитора Юрия Геворкяна»**<br>Երևան,՝Երաժշտական Հայաստան՛ հրատ., | 92-97 էջեր |
| Բաղդասարյան Մարգարիտա | **«Композитор Юрий Геворкян» (к юбилею композитора)**<br>Երևան,՝Հայ կոմպոզիտոր՛ հրատ., | 45-49 էջեր, |
| Հարությունյան Աննա | **«Ալեքսանդր Սպենդիարյան երաժշտական դպրոցի պատմության էջերից»**<br>ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտ,՝Կանթեղ՛ հրատ. | Տպագրության մեջ է |
| Հարությունյ | **՝Ստեփան Լուսիկյան. դիմանկարի ուրվագծեր՛** | 15 էջ |

| | | |
|---|---|---|
| ան Աննա | ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտ, ՙԿանթեղ՚ հրատ. | |
| Դադոյան Ելենա | **«Сценическое волнение и способы его преодоления»**<br>СОВРЕМЕННАЯ НАУКА, ОБЩЕСТВО И ОБРАЗОВАНИЕ: АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ, ДОСТИЖЕНИЯ И ИННОВАЦИИ: сборник статей Международной научно-практической конференции. В 2 ч. Ч. 2. – Пенза: МЦНС «Наука и Просвещение». – 2022. – с. 104-108. МК-1452 | 5 ст. |
| Դադոյան Ելենա | **«ФОЛЬКЛОР В АРМЯНСКОЙ КУЛЬТУРЕ НОВЕЙШЕГО ВРЕМЕНИ»**<br>XI Международная научно-практическая конференция «Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия», Институт филологии и межкультурной коммуникации Казанского федерального университета. | 5 ст. |
| Կոստանյան Արուսյակ | **«ЛЮДВИГ ВАН БЕТХОВЕН, СОНАТА OP.2 №3 C-DUR: МЕТОДИЧЕСКИЙ АНАЛИЗ, ТРАКТОВКА И МЕТОДИЧЕСКИЕ СОВЕТЫ ДЛЯ ИСПОЛНЕНИЯ»**<br>(методический музыкальный анализ для студентов музыкальных вузов и ссузов)<br>Международный научный журнал «Научные вести» | 10 ст.<br>Տպագրության մեջ է |
| Ավետիսյան Ֆլորա | **РОЛЬ РЕПЕРТУАРА В РАЗВИТИИ МУЗЫКАНТА**<br>XI Международная научно-практическая конференция “Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия” – Казань, 21 октября 2022 года. | Տպագրության մեջ է |
| Եղիազարյան Վյաչեսլավ | **՝Своеобразие становления и черты хачатуряновского пианизма՚**<br>XI Международная научно-практическая конференция “Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия” – Казань, 21 октября 2022 года. | 12 ст. |
| Կարապետյան Մերի | ***<<Использование элементов армянской фольклорной музыки в джазовом и эстрадном жанре>>***<br>***https://aspu.am/hy/content/masnakcecin_srtumd_rusastan_mijazgayin_gitazhoghovin/?fbclid=IwAR1UbDD7L3LoWMe0F8faGNdEkqT1Od5bBzbwgzSlRUjT1VnrKph36u0sOws#sthash.OXmMm0m0.1NCyP4rz.dpbs*** | 13 էջ |

| Ամբիոնի գիտական սեմինարներ | |
|---|---|
| Սեմինարի անվանումը | Անցկացման վայրը, օրը |
| Աննա Հարությունյան-՝Հոգու խոստովանություն՝ համերգ-սեմինար | 15.04.22թ., ՀՊՄՀ Կուլտուրայի մասնաշենքի դահլիճ [https://www.youtube.com/watch?v=ZBb3mijp7H8](https://www.youtube.com/watch?v=ZBb3mijp7H8) |
| Աննա Աղամյան-Դասարանական համերգ-սեմինար | 31.05.22թ., ՀՊՄՀ 4-րդ մասնաշենքի դահլիճ |
| Արուսյակ Կոստանյան-*«Հայ կոմպոզիտորներ ի երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներով» երաժշտական աշխատության համերգ-սեմինար* | 20.10.22թ., ՀՊՄՀ Կուլտուրայի մասնաշենքի դահլիճ<br>[https://aspu.am/hy/content/hnchecin_sirvats_steghtsagortsutyunner/?fbclid=IwAR3tg5BuR-WQrD-rpB8RU3MHOn-HV5__6655e3aQzpk7L6Q0HC9_JoHz0ds#](https://aspu.am/hy/content/hnchecin_sirvats_steghtsagortsutyunner/?fbclid=IwAR3tg5BuR-WQrD-rpB8RU3MHOn-HV5__6655e3aQzpk7L6Q0HC9_JoHz0ds#) |
| Անահիտ Գասպարյան-Դասարանական համերգ - սեմինար | 19.12.22թ., ՀՊՄՀ 4-րդ մասնաշենքի դահլիճ |

| Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ | | | |
|---|---|---|---|
| Ա.Ա.Հ. | Թեկն/դոկտորական-մասնագիտություն | Պաշտպ-ն ամսաթիվ | ԲՈԿ-ի հաստատում |
| Վահանյան Նաիրա Յուրիի | ԺԳ.00.02-Դասավանդման և ուսուցման մեթոդիկա՝երաժշտություն՝ | 24.11.2022թ. | ՀՀ ԲՈԿ-ի՝Մանկավարժություն՝ 020 մասնագիտական խորհրդի նիստ: |

| Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ |
|---|

| Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք | ՈԲ-ի անցկացման հաստատություն | ՈԲ ժամկետները | Արդյունք |
|---|---|---|---|
| Աննա Հարությունյան | Vytautas Magnus University | 24.04.22-30.04-22 | Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ |
| Մերի Կարապետյան | Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարություն | 27.10.22-28.10.22 | Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ |
| Աննա Հարությունյան | ՀՊՄՀ | 18.11.21-07.01.22 | Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ |
| Նաիրա Մաղոյան | ՀՊՄՀ | 18.11.21-07.01.22 | Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ |

| Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ | | |
|---|---|---|
| Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/ | Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ | Ուսանողական զեկույց / քանակ |
| Բուհական | Գիտաժողով՝ Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների մասնակցությամբ/ ԵՊԿ | **Ուսանող**՝ Գրիգորյան Շուշաննա Մարզպետի, **զեկույցի անվանումը**՝ <<Երգեցողությունը՝ երեխաների ռիթմական զգացողության զարգացման միջոց>>,<br>**Ղեկավար**՝ ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյան |
| Բուհական | Գիտաժողով՝ Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների մասնակցությամբ/ ԵՊԿ | **Ուսանող**՝ Սիմոնյան Լալա Մանուկի<br>**Զեկույցի անվանումը**՝<br><<Սոֆա Ազնաուրյանի՝ երեխաների համար ՙՉիկարելիի արկածները՚ օպերայի երաժշտադաստիարակչական նշանակությունը>>,<br>**ղեկավար**՝ ամբիոնի դոցենտ Մարգարիտա Բաղդասարյան |
| Բուհական | Գիտաժողով՝ Հայաստանի արվեստի բուհերի և երաժշտական քոլեջների մասնակցությամբ/ ԵՊԿ | **Ուսանող**՝ Մանուչարյան Անի Վազրիկի<br>**Զեկույցի անվանումը**՝<br><<Հանրակրթական դպրոցում հոգևոր երաժշտության դասավանդման մեթոդ>>,<br>**ղեկավար**՝ ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյան |

| Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ | | | |
|---|---|---|---|
| Օլիմպիադայի մակարդակը | Մասնագիտական շրջանակ | Ուսանող քանակ | Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ. |
| ՙՄոցարտ՚ **միջազգային** մրցույթ-փառատոն | Դաշնամուր | 1 | 1-ին տեղ<br>Սյուզաննա Մկրտչյան Վարդանի |
| ՙՍրտումդ՝ Ռուսաստան՚ **միջազգային** գիտաժողով | Վոկալ | 1 | Գալա-համերգի մասնակից<br>Ռիտա Հովհաննիսյան Հովիկի |
| ՙԱզգային երգիչ՚ **հանրապետական** մրցույթ | Վոկալ | 1 | կիսաեզրափակիչ փուլի անդամ<br>Շուշանիկ Թալայան Կարենի |

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում: |
|---|
| ***Համագործակցական աշխատանքները գտնվում են որոնումների փուլում:*** |
| Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում: |
| • **ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտ**- Ամբիոնը պարբերաբար հանդես է գալիս որպես առաջատար կազմակերպություն, տրամադրելով կարծիք՝ թեկնածուական ատենախոսությունների համար:<br>1. 2022թ.-ի նոյեմբերի 22-ին ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը մասնակցել է ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքներին. Անի Սարգսի Հակոբյանի՝ "Շահնամեն Իրանի երաժշտական մշակույթում" թեմայով ատենախոսության նախնական քննարկմանը (հրաման՝ N29/29.2/29595-2022):<br>2. Ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը կարծիք (ընդիմախոսություն) է տրամադրել ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ Գոռ Աշոտի Սալնազարյանի՝ ՙԲեգլար Ամիրջանի կատարողական արվեստը՚ թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԷ.00.02-ՙԵրաժշտական արվեստ՚ մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, որը կայացել է 08.12.2022թ.-ին:<br>3. 2022թ.-ի նոյեմբերի 11-ին ևս, Աննա Հարությունյանը մասնակցել է ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքներին. Ասղար Ջանարի Վահաբի՝ <<Հայ ավանդական օրորներ>> թեմայով ատենախոսության նախնական քննարկմանը (հրաման՝N29/29.2/27620-2022):<br>• **Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա**- Ամբիոնի դասախոսները |

ուսանողների հետ համատեղ մասնակցում են ԵՊԿ-ում կայացած ամենամյա գիտաժողովներին, մասնակցությամբ Հայաստանի արվեստի բուհ-երի և քոլեջների.

1. *Անի Վազրիկի Մանուչարյան-զեկույցի անվանում՝ Հանրակրթական դպրոցում հոգևոր երաժշտության դասավանդման մեթոդ, մասնակցել է 20.05.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյան:*
2. *Շուշաննա Մարզպետի Գրիգորյան- զեկույցի անվանում՝ Երգեցողությունը՝ երեխաների ռիթմական զգացողության զարգացման միջոց, մասնակցել է 30.11.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյան:*
3. *Լալա Մանուկի Սիմոնյան- զեկույցի անվանում՝ Սոֆա Ազնաուրյանի՝ երեխաների համար Չիկարելլի արկածները օպերայի երաժշտադաստիարակչական նշանակությունը, մասնակցել է 30.11.2022թ.-ին, ղեկավար՝ ամբիոնի դոցենտ Մարգարիտա Բաղդասարյան:*

- **Արամ Խաչատրյանի տուն-թանգարան** - Ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կայացել է համերգ-սեմինար՝ նվիրված բուհ-ի 100-ամյակին: Տեղի է ունեցել 2022թ.-ի ապրիլի 19-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում: https://www.youtube.com/watch?v=kQgjKmeDPWc
- **Կոմիտասի թանգարան**-ինստիտուտն Հաշվետու տարում ամբիոնի ասիստենտ Մարիա Արամի Սիմոնյանը առկա ուսուցման բակալավրիատի 2-րդ կուրսի հետ կազմակերպել է այցելություն Կոմիտասի թանգարան-ինստիտուտն, որտեղ ուսանողները մանրամասն ծանոթացան Կոմիտասի գործունեության բոլոր ճյուղերին: Նրանք կատարեցին Կոմիտասի մի քանի երկձայն ստեղծագործություններ, դիտեցին սրահներում տեղադրված լուսանկարները,սարքի լսեցին Կոմիտասի ձայնը: Ուսանողները բավականին տպավորված էին, քանի որ սա նրանց առաջին այցելությունն էր, սակայն հարկ է նշել, որ մեկ այցելությունը բավարար չէ Կոմիտասի գործունեությանը ծանոթանալու համար: Աշխատանքը պետք է շարունակել նաև պարապմունքների ընթացքում:

| Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում | | | | |
| Դասախոս Ա.Ա.Հ. | Պաշտոն | Երկիր/բուհ | Մնալու ժամկետ | Արդյունքներ |
| Հարությունյան Աննա Պետրոսի | | Լիտվա/Vytautas Magnus University | 24.04.22-30.04.22 | Մասնագիտական որակի բարձրացման սերտիֆիկատ |

## 5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:

- **Ամբիոնը մշտապես աշխատանք է ծավալում հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, որոնց ընթացքում ձևավորվում է դասախոս-ուսանող-աշակերտ սերտ փոխկապակցվածությունը, ինչն էլ նպաստում է աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղության որոշմանը:**
- **Նաև հաշվետու տարում ամբիոնի ՊԴԱ այցելել է Երևանի և մարզերի հանրակրթական**

դպրոցներ, ծանոթացրել բուհ-ին, մանրամասն ներկայացրել  բաժինների առանձնահատկությունները, բացատրել ընդունման կարգը և բաժանել բուկլետներ դպրոցների աշակերտներին:

- Ամբիոնի մարքեթինգային գործունեությանը կարելի է ականատես լինել նաև  **Facebook**  սոցիալական ցանցում, որտեղ երաժշտության մանկավարժության ամբիոնի էջը իր ակտիվ գործունեությունն է ծավալում: Այստեղ պարբերաբար տեղադրվում են ամբիոնի կազմակերպած միջոցառումները, ծրագրերը և այլն:

[https://www.facebook.com/profile.php?id=100023658346144](https://www.facebook.com/profile.php?id=100023658346144)

| Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ | | | |
|---|---|---|---|
| Աշխ-ի տեսակը | Համակարգող<br>Ա.Ա.Հ. | Միջոցառման անվանումը | Ժամկետը |
| Ուսումնական | Սիմոնյան Մարիա Արամի | ՛Աշուն՛ | 18.11.22թ<br>Երևանի թիվ 122 հիմնական դպրոց:<br>Մասնակցել են 3-րդ և 4-րդ դասարանների աշակերտները, կատարելով 2 երգ նվիրված աշնանը: |
| Ուսումնական | Ավետիսյան Մարիաննա Ռոլանդի | ՛Կոմիտասյան երեկո՛ | 18.03.22թ.,<br>Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց,<br>մասնակցել են 4-րդ դասարանի աշակերտները՝ ուսանողների հետ միասին: |
| Ուսումնական | Կոստանյան Արուսյակ Համազասպի | միջոցառում՝ նվիրված Շառլ Ազնավուրին | 13.12.22թ.-ին՝<br>Երևանի թիվ 57 հիմնական դպրոցում: Մասնակցել են հեռակա բակալավրիատի4-րդ կուրսի ուսանողները և դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները: |
| Ուսումնական | Կոստանյան Արուսյակ Համազասպի | Ամանորյա միջոցառում | 09.12.22թ.-ին՝<br>Երևանի թիվ 57 հիմնական դպրոցում: Մասնակցել են հեռակա բակալավրիատի4-րդ կուրսի ուսանողները և դպրոցի 2-րդ դասարանի աշակերտները: |
| Ուսումնական | Խաչատրյան Արաքսյա | միջոցառում՝ նվիրված մեծն Կոմիտասին: | 26.09.12թ., Երևանի Վազգեն Ա-ի անվան թիվ 168 հիմնական |

| | | | |
|---|---|---|---|
| | Արտավազդի | | դպրոց, մասնակցել են առկա բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողները: |
| Ուսումնական | Խաչատրյան Արաքսյա Արտավազդի | Ֆլեշ մոբ | 17.12.22թ.-ին առկա բակալավրիատի ուսանողները թիվ 168 հիմնական դպրոցի տարբեր դասարաններում անցկացրել են ֆլեշ մոբ, պատահական դասարաններում ներկայացնելով Կոմիտաս վարդապետի ստեղծագործությունները երկձայն և եռաձայն: |
| Ուսումնական | Մարգարյան Նաիրա Արթուրի | միջոցառում՝ նվիրված կանանց տոնին | 02.03.2022թ.,<br><br>Երևանի թիվ 106 հիմնական դպրոցում՝ ուսանողների մասնակցությամբ: |
| Ուսումնական | Մարգարյան Նաիրա Արթուրի | Ֆլեշ մոբ | 13.04.2022թ.,<br><br>Երևանի թիվ 106 հիմնական դպրոցում ուսանողները կազմակերպել են ֆլեշ մոբ՝ կատարելով Կոմիտաս վարդապետի ստեղծագործությունները: |
| Ուսումնական | Մարգարյան Նաիրա Արթուրի | Երաժշտական դասամիջոցներ | 18.05.2022թ.,<br><br>Երևանի թիվ 106 հիմնական դպրոցում ուսանողները աշակերտների հետ համատեղ կազմակերպել են երաժշտական դասամիջոցներ, երգելով հայրենասիրական երգեր: |
| Ուսումնական | Պետրոսյան Սուսաննա Էդվարդի | Դաս-միջոցառում՝՝Կոմիտաս՛ | 19.10.2022թ., Երևանի Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց: Մասնակցել են դպրոցի 3-րդ դասարանի աշակերտները և առկա բակալավրիատի4-րդ կուրսի ուսանողները: |
| Ուսումնական | Պետրոսյան Սուսաննա Էդվարդի | ՛Հովհաննես Թումանյանի հեքիաթների աշխարհում՛ | 24.02.2022թ., Երևանի Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց: Մասնակցել են առկա բակալավրիատի 3-րդ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կուրսի ուսանողները: |
| Ուսումնական | Դաղոյան Ելենա Թելմանի | միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության տոնին՝ «Գարունն ու մայրիկս»: | 06.04.22թ., ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցում: Մասնակցել են առկա բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողները և դպրոցի 5-րդ դասարանի աշակերտները: |
| Ուսումնական | Դաղոյան Ելենա Թելմանի | միջոցառում՝ նվիրված ՀՊՄՀ-ի 100-ամյակին: | 31.10.22թ.-ին՝ համալսարանի նախասրահում: Մասնակցել են առկա բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները թիվ 57 հիմնական դպրոցի աշակերտների հետ միասին: |
| Ուսումնական | Դաղոյան Ելենա Թելմանի | միջոցառում՝ նվիրված Նոր տարվան: | 13.12.22թ., ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցում: Մասնակցել են առկա բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները և դպրոցի 1-ին դասարանի աշակերտները: |
| Մեթոդական | – | – | – |
| Դաստիարակչական | – | – | – |

| Աշխատանք հանրության շրջանում | | | |
|---|---|---|---|
| Աշխ-ի տեսակը | Համակարգող Ա.Ա.Հ. | Միջոցառման անվանումը | Ժամկետը |
| Մարքեթինգային գործունեություն | Օջախյան Արմինե Օնիկի | Ծանոթացում ամբիոնին | 06.12.22թ., ժամը՝ 10:00<br>ք. Երևանի թիվ 94 ա/դ<br>Տնօրեն՝ Զինա Խաչատրյան Ստեփանի |
| Մարքեթինգային գործունեություն | Կոստանյան Արուսյակ Համազասպի | Ծանոթացում ամբիոնին | 07.12.22թ., ժամը՝ 11:30<br>ք. Երևանի թիվ 2 ա/դ<br>Տնօրեն՝ պկ տկն. Առաքելյան |
| Մարքեթինգային գործունեություն | Դաղոյան Ելենա Թելմանի | Ծանոթացում ամբիոնին | 08.12.22թ., ժամը՝ 10:00<br>ք. Երևանի թիվ 105 ա/դ<br>Տնօրեն՝ Արմինե Սողոյան Ֆրունզիկի |

| | | | |
|---|---|---|---|
| Մարքեթինգային գործունեություն | Աղամյան Աննա Ժորիկի | Ծանոթացում ամբիոնին | 14.12.22թ., ժամը՝ 12:00<br>ք. Երևանի թիվ 109 ա/դ<br>Տնօրեն՝ Սամվել Թաղնոսյան Պամիլոնի |
| Մարքեթինգային գործունեություն | Թաղնոսյան Շաքե Սուրենի | Ծանոթացում ամբիոնին | 15.12.22թ., ժամը՝ 11:00<br>ք. Երևանի թիվ 97 ա/դ<br>Տնօրեն՝ Արմինե Արշակյան Մարտինի |
| Մարքեթինգային գործունեություն | Հարությունյան Աննա Պետրոսի | Ծանոթացում ամբիոնին | 16.12.22թ., ժամը՝ 15:00<br>Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց |
| Մարքեթինգային գործունեություն | Կարապետյան Մերի Համլետի | Ծանոթացում ամբիոնին | 19.12.22թ., ժամը՝ 14:30<br>Բարսեղ Կանաչյանի անվան N 17 երաժշտական դրպոց |
| Մարքեթինգային գործունեություն | Ավետիսյան Մարիաննա Ռոլանդի | Ծանոթացում ամբիոնին | 20.12.22թ., ժամը՝ 16:00<br>Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց |
| Մարքեթինգային գործունեություն | Մարգարյան Նաիրա Արթուրի | Ծանոթացում ամբիոնին | 14.12.22թ., ժամը՝ 09:00<br>Արարատի մարզի դպրոցներ |
| Մարքեթինգային գործունեություն | Ալավերդյան Տիգրան Գարիկի | Ծանոթացում ամբիոնին | 13.12.22թ., ժամը՝ 09:00<br>Կոտայքի մարզի դպրոցներ |

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը: |
|---|
| • Ամբիոնի դասախոսները հաշվետու տարում մասնակցել են հանրակրթական դպրոցի՝Երաժշտություն՝ առարկայի ուսուցչի կամավոր ատեստավորման թեստերի պատրաստմանը և դրա անցկացմանը.<br>Ելբակյան Սարգիս Էդուարդի<br>Հարությունյան Աննա Պետրոսի<br>Մելիքսեթյան Գոհար Բեժանի |

Յուզբաշյան Յուրի Վաղարշակի

Բաղդասարյան Մարգարիտա Էդուարդի

Ադամյան Աննա Ժորիկի

- Համալսարանում օգոստոս ամսին կազմակերպվել է հանրակրթական դպրոցի՝Երաժշտություն՝ առարկայի ուսուցիչների պարտադիր որակավորման դասընթաց, որը վարել է ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանը:
- Հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել են երաժշտության ուսուցման և դասավանդման դասընթացներ (30 կրեդիտ), որը վարել է Գոհար Մելիքսեթյանը:

Ամբիոնի դասախոսների մասնակցությունը պարտադիր և կամավոր ատեստավորումների գործընթացներին, դասախոսներից պահանջում է մեծ պատասխանատվություն իրենց աշխատանքի նկատմամբ և նպաստում մասնագիտական որակի բարձրացմանը:

- Ամբիոնը ակտիվորեն մասնակցում է համալսարանում և ֆակուլտետում կազմակերպվող քննարկումներին և դրանց հիման վրա 2022թ.-ին համալսարանի ռազմավարական ծրագրի ընդունումից հետո վերանայվել են ամբիոնում կատարված աշխատանքները:
    1. խստացվել է վերահսկողությունը Classroom էլեկտրոնային հարթակում,

       (այս հարցը մշտապես քննարկվում է ամբիոնի նիստերում)

    2. կատարվել են քննարկումներ, որոնք ամեն ամսվա վերջում գրանցվել են ամբիոնի ամսեկան հաշվետվությունների մեջ և ուղարկվել կրթության էլեկտրոնային կառավարման համակարգի աշխատակիցներին: Այս քննարկումները ստիպել են ոչ այնքան պատասխանատու դասախոսներին էլ ավելի բծախնդրորեն մոտենալ իրենց աշխատանքին և պարտականություններին:
- Ուսանողների և դասախոսների ինքնավերլուծությունների հիման վրա որակի հանձնաժողովը և ամբիոնը կազմակերպել են քննարկումներ և՛ մասնագիտական և՛ ոչ մասնագիտական առարկաների գործունեության արդյունավետության վերաբերյալ: Դրա արդյունքում ակտիվանում է համագործակցությունը համալսարանի տարբեր ամբիոնների միջև, ինչի շնորհիվ բարձրանում է ընդհանուր կրթության արդյունավետությունը:
- Բանավոր և գրավոր հարցումների և դասալսումների արդյունքում ամբիոնը տեղեկանում է ուսանողների և դասախոսների ծավալած գործունեության արդյունավետության մասին, սակայն ավելի կարևոր է, երբ կրթության որակը ստուգվում է մանկավարժական պրակտիկայի ընթացքում, երբ դպրոցներում դասալսումներ են իրականանում, ինչի հիման վրա դասախոսները վերանայում են իրենց ծրագրերը, ավելի ճիշտ են գնահատում ուսանողների մասնագիտական որակները և հնարավորությունները , որը բարձրացնում է մասնագիտական կրթության որակը:
- Ողջ հոբելյանական տարում ամբիոնի դասախոսները և ուսանողները մասնակցել են տարբեր միջոցառումների և նման շփումները նպաստել են ուսանողների մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

- **ՀՀ ԳԱԱ Ինստիտուտի հետ համատեղ աշխատանքների արդյունքում տնօրեն՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը պարբերաբար հրավիրվում է ամբիոնի մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությանը, որպես հանձնաժողովի նախագահ կամ անդամ:**

- **Աննա Աստրյանի միջնորդությամբ ամբիոնի դասախոսները և ուսանողները հնարավորություն են ստացել օգտվել ԳԱԱ ինստիտուտի գրադարանից, իրենց մասնագիտական որակը և դրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:**
- **ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցի ՙԵրաժշտություն՚ առարկայի ուսուցչուհի Ազնիվ Բարեղամյանը, որը հանդիսանում է ամբիոնի նախկին ուսանողուհին, ակտիվ համագործակցություն է ծավալում մանկավարժական պրակտիկայի ընթացքում և դպրոցի միջոցառումները անցկացվում են համալսարանի դահլիճներում՝ ուսանողների, դասախոսների, աշակերտների և նրանց ծնողների ներկայությամբ:**

| Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում | | |
|---|---|---|
| Միջոցառման անվանումը | Պատասխանատու | Արդյունքահենություն |
| ՙՀոգու խոստովանություն՚ | Աննա Հարությունյան | Միջոցառումը նպաստել է ուսանողների ծանոթացմանը միջոցառման մեջ ընդգրկված ստեղծագործություններին, որոնք կարող են ընդգրկվել նաև ուսումնական ծրագրերում: |
| *«Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներով» երաժշտական աշխատության համերգ-շնորհանդես* | Արուսյակ Կոստանյան | Միջոցառումը նպաստել է ուսանողների ծանոթացմանը միջոցառման մեջ ընդգրկված ստեղծագործություններին, որոնք կարող են ընդգրկվել նաև ուսումնական ծրագրերում: |
| ՙ100 և ավելի՚ դասարանական համերգ | Անահիտ Գասպարյան | Միջոցառումը նպաստել է ուսանողների կատարողական մակարդակի բարձրացմանը: |
| Դասարանական համերգ-քննարկում | Աննա Աղամյան | Համերգի ընթացքում դասախոսը կատարել է քննարկում՝ ուղղված կատարողական խնդիրների և բեմական հուզմունքի հաղթահարմանը: Այն նպաստել է ուսանողների մեթոդական գիտելիքների ձեռքբերմանը և փորձի բարելավմանը: |
| | Վերը նշված միջոցառումները նպաստում են .<br>• դասախոսների պատասխանատվության բարձրացմանը և իրենց աշխատանքի | |

| | | |
|---|---|---|
| | արդյունավետությանը։<br>• ուսանողների կատարողական մակարդակի բարձրացմանը իրենց մասնագիտական բնագավառներում։ | |

| Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն) | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| Հարցմանն ընդգրկելով ամբիոնի բոլոր՝ անհատական և խմբական առարկաների դասախոսներին, նպատակ ունեինք առավել ամբողջական պատկերացում ունենալ դասախոսների աշխատանքի վերաբերյալ;<br>-անհատական և խմբական առարկաների դասախոսների գնահատումը էապես չի տարբերվում, ինչը գոհացուցիչ է։<br>-դասախոսների աշխատանքը մեծմասամբ գնահատվել է ամենաբարձր 4 միավորով։ Դա ուսանողների վերաբերմունքի արտացոլումն է դասախոսների մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների նկատմամբ։ Այդ արդյունքներն ամրապնդվում են դասալսումներով;<br>-էլեկտրոնային հարթակում առաջադրանքները հանձնարարվում են և ստուգվում նշված ժամկետներում;<br>-դասախոսների գիտական, գիտա-մեթոդական և գիտահետազոտական աշխատանքները նպաստում են կրթական գործընթացի հանրայնացմանը և նրանց աշխատանքային գործունեության թափանցիկությանը։ | ՀՀ սահմաններից դուրս դասախոսների գիտական, գիտա-մեթոդական և գիտահետազոտական աշխատանքների ճանաչմանը խանգարում է օտար լեզուների (հատկապես անգլերենի) ոչ բավարար իմացությունը։ Բացառություն է ռուսերենը, հետևաբար ՌԴ-ում հրատարակումներն ու գիտաժողովների մասնակցությունը։<br>Մասնաշենքի վատ պայմանները։ |
| Հնարավորություններ | Վտանգներ |
| Ուսանողների գնահատումները և դասալսումների արդյունքները վկայում են դասախոսական կազմի մասնագիտական տեսական և գործնական պոտենցիալի մասին, ինչը հնարավորություն կտա նրանց իրականացնել ուսումնական, գիտական, գիտա-մեթոդական, գիտահետազոտական բազմապիսի գործունեություն ոչ միայն ՀՀ-ում, այլ նաև նրա | Արվեստի, մասնավորապես երաժշտության բնագավառում, ՀՊՄՀ-ի մասնագետների գործունեության հանրայնացման հնարավորությունների սահմանափակությունը չի բխում ազգային մշակույթի և ազգային արդիական կրթական համակարգի ճանաչման գործընթացին |

| Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն) | |
|---|---|
| սահմաններից դուրս; | |